


Հ Օ Ց Կ Ա Կ Տ Ե Ս Ս Ո Ւ Լ Ո Ւ Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

---

ՄԵԾԱՀԱՍՎԿՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈԵՍԹՈՒԲԼԻԿԱԿԱՆ  
ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

ԵՆԳՐԱԳԵՏՆԵՐԻՆ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է  
ՍՈՎԱՐԵՑՆԵԼ ԱՅԲԲԵՆԱԲԱՆՈՎ



Լ Ո Ւ Շ Ր Ա Տ

Երևան

1940

06 APR 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒ ԼՈՒԺՈՎԴԱՐԱՑ

ՄԵԽԱՎԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՌԵՍՈՒԲԻԿԱԿԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱՐԻԵՏԸ

379

Ա-56

Կ

ԱՆԳՐԱԳԵՑՆԵՐԻ ԻՆՉՊԵՍ ՊԵՏք է  
ԽՈՎՃԵՑՆԵԼ ԱՅԲԵՆԱՐԱՆԸ.

ОБЯЗАТЕЛЬНЫЙ  
ЭКЗЕМПЛЯР

ԼՈՒԺՈՎԸ

ԵՐԿՐՈ

1940

8072

ԱՆԳՐԱԳԵՏՆԵՐԻՆ ԻՆՉՈԹԵՍ ՊԵՏՔ Է ՍՈՎՈՐԵՑՆԵԼ  
ԱՅԲԲԵՆԱՐԱՆՈՎ

Անգրագիտության վերացման դպրոցն իրեն նպատակ է դնում՝ սովորեցնել անգրագիտության ամբողջական բառերով, առանց տառեր բաց թողնելու, ուղղագրական կանոնները պահպանելով՝ կարդալ ու հասկանալ պարզ տեքստեր և ինքնուրույն կերպով գրի առնել այն:

Անցնելով անգրագիտության վերացման դպրոցների համար կազմված «Այբբենարան» դասագիրքով, սովորողները գաղափար ևն կազմում նախադասության մասին, ձեռք են գերում շարժական այբուբենով բառեր կազմելու, նախադասություններ, փոքր պատմություններ կարդալու և պատրաստի օրինակից նախադասությունները ճշուաթյամբ գրի առնելու ունակություն։ Շարժական այբուբենով սովորողներին պետք է կազմել տալ այնպիսի բառեր կամ նախադասություններ, որոնց հնչյունները—տառերն արդեն ծանոթ են նրանց։ Գրավոր աշխատանքն սկզբում պետք է տանել արտագրության ձևով, իսկ հետագայում նաև հիշողությամբ։

Ի՞՞ՆՉՈԹԵՍ է ԿԱԶՄՎԱԾ «ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ»

Գրաճանաչությունը, հենց առաջին դասից սկսած, տարվում է սովորողին հնչյունի գաղափարը տալու սկզբունքով, որից հետո տրվում է ամբողջ բառը։ Բառը վեր է ածվում վանկերի, վանկերը հնչյունների (անալիզ), ապա անցնում են բառի ընթերցմանը՝ վանկերով կամ ամբողջ բառերով (սինթեզ)։

Օրինակ՝ սարեր (ե) (անալիզ)

Սարեր (սինթեզ)

Մեծահասակ անգրագիտության գրաճանաչ դարձնելու գործը պետք է սկսել համեմատաբար հեշտ, հնչյուն—տառից ու բառից և աստիճանաբար նրանց վարժեցնել կարդալու ավելի գժվար բառեր ու նախադասություններ։



125

Ա/

Պատ, խմբաղիր՝ Ար. Սարգսյան  
Տել, խմբաղիր՝ Հ. Կարապետյան  
Սրբագրիչ՝ Ա. Պարոնիկյան  
Հանձնված է արտադրության 1940 թ. դեկտեմբերի 2-ին  
Սուրագրված է տպագրության 1940 թ. դեկտեմբերի 21-ին  
Վ. 2002, հրատ. № 94, Պատվ. № 298, Տիրաժ 500

Լուսաբար տպարան, Երևան, Տիրյան № 127

Անգրագիտության վերացման դպրոցների «Այբբենարան»-ն էլ կազմված է հենց այդ սկզբունքով։ Սկզբում տրվում են պարզ, հասկանալի և ավելի հեշտ կարդացվող բառեր, որից հետո, աստիճանաբար դալիս են համեմատաբար դժվար կարդացվող բառեր։ Բացի դրանից «Այբբենարան»-ի սկզբում տրված են այնպիսի բառեր, որոնք արտասանվում են այնպես, ինչպես գրվում են։

Սկզբի երեսներում տրված են միավանկ ու երկվանկ բառեր, որից հետո բազմավանկ բառեր։

Միավանկ ու երկվանկ բառեր կարդալու տեխնիկան լավ յուրացնելուց հետո, բազմավանկ բառեր կարդալու առանձին վըժվարություն չի առաջացնի։

«Այբբենարան»-ում, յուրաքանչյուր նոր անցնելիք հընչյուն տառին հատկացված է մի առանձին էջ։

Գրամանաչության շրջանի կարեռ մոմենտներից մեկն էլ այն է, որ սովորողներն անցած նյութը կարդանան արմատապես յուրացն։ Այդ նպատակի համար էլ բացի հիմնական տեքստից «Այբբենարան»-ում տրված են որոշ բառերի վարժություններ։ Վարձության համար վերցրված են այնպիսի բառեր, որոնց մեջ անցած տառերը պարբերաբար կրկնվում են։

«Այբբենարան»-ում պահպանված է նաև նախադասությունների կառուցման հաջորդականությունը։ Սկզբում տրված են այնպիսի նախադասություններ, որոնք բաղկացած են երկու շառեր, իսկ հետո երեք, չորս բառից և այլն։

Դառագրքի յուրաքանչյուր էջում (այբբենարանի մասում) տրված են կոնկրետ նկարներ։ Օրինակ՝ նկարված է սար և նկարի տակ գրված է սար բառը և այլն։

Այս հանդամանքը սովորողներին օգնում է իմաստավորել բառը և ավելի հեշտությամբ կարդալ տրված տեքստը։ Նկարների օգնությամբ սովորողները կարող են հեշտությամբ վերականգնել իրենց հիշողության մեջ մոռացած հնչյունները։

«Այբբենարան»-ում կա նաև գրել սովորեցնելու համար անհրաժեշտ նյութ։ Զեռագիր տեքստը տրվում է դասագրքի հենց առաջին էջից։ Սրանից արդեն պարզ է, որ կարդալու և գրելու ուսուցումը միաժամանակ սկսվում են հենց առաջին դասից։

Ինչպես կարդալու, այնպես էլ գրելու ժամանակ սովորողները վարժվում են տառի գրավոր ձեռևերպման մեջ։ Ապա անցնում են ամբողջ բառ գրելուն, որի համար դասադրում տրված են համապատասխան վարժություններ։ Գրավոր աշխատանքի

համար տրված տեքստերը պետք է տայ սովորողներին մի քանի անգամ արտադրելու և գրեից, և պատահանտակեց, որով նրանք տվելի արագ կնրագով ձեռք կրերեն գրելու վարժությունը և կյուրացնեն նրա տեխնիկան։ Ուժ-հնանը տառ անցնելուց հետո սովորողներին պետք է տալ արտագրելու նաև տպագիր տեքստ։

Դասագրքի այբբենարանի մասը կազմված է այնպես և նյութերը դասավորված են այն հաշվով, որպեսզի մեկ էջը հնարավոր լինի անցնել միջին թվով 2 դասում, մեկ դասը հաշվելով 45-ական ըուպեւ։

### Ի՞նչՊԵՍ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՈԼՈՐԵՑՆԵԼ ԱՅԲԲԵՆԱՐԱՆՈՎ

Սովորողներին ընթեցանության վարժեցնելու կամ այսպես տոսած, գրամանաչ դաշնելը հենց սկզբի դասից պարզվում է ոչ թե ամբողջ բառային, այլ տառային—հնչյունային սիստեմով։

Մեխանիկորեն կարդալուց խուսափելու համար անհրաժեշտ է, որ կարդացած բառի յուրաքանչյուր հնչյունը ծանոթ լինի ովկորողին։

Ամեն մի նոր բառ պետք է վերածել վանկերի և վանկերը հնչյունների։

Բառն արտասահման ժամանակ սովորողը պետք է տեսնի այն, որտեսզի կարդանա լավ ըմբռնել թե տվյալ բառի մեջ որ տառը որ հնչյունին է համապատասխանում։ Դրա համար էլ առն մի բառ, որն իր մեջ պարունակում է հերթականորեն նոր անդամներից տառ, դաստիվի կողմից պետք է նախօրոք կազմված լինի շարժական խոշոր տառերից և կախված դրատակակից՝ բուշով սովորողների առաջ։ Շարժական տառերից կազմված բառի սկնությամբ, լողական անալիզով, բառը վեր է ածվում վանկերի, վանկը տառ—հնչյունի։

Սովորողն անպայման պետք է հասկանա իր կարդացած բառի նշանակությունը։

Կոնկրետ միտք չպարունակող բառերը սովորողները դժվարությամբ են կարդում։

Կարդալ սովորեցնելու ժամանակ ամեն կերպ պետք է զգուշանալ, որ սովորողները բառը երբեք տառերով չկարդան։ Տառ տառ կարդալու սովորությունն արգելը է հանդիսանում վարժություն կարդալու ունակության զարգացմանը և կարդացածը հասկանալուն։ Բայց միտքամից ամբողջ բառերով կարդալը ևս դժվար է սովորողների համար, ուստի ավելի լավ է վարժեցնել

նրանց երկվանկ-եռավանի բառերը կարգալ վանկերով: Վանկերով կարդալու ժամանակ սովորողները հեշտությամբ են կարուղանում հասկանալ տարբեր տառածնչյունի նշանակությունը վաճակի մեջ, ինչպես նաև ամբողջ բառը:

Առանձնապես հեշտ, ինչպես նաև հաճախ կրկնվող բառերը, պետք է կարդալ տալ ամբողջ բառը միտնդամբ և քանի մոտենում են այբբենարանի վերջին, այնքան այս մէթողն տվելի հաճախ պետք է կրկնվի:

Որպեսզի այբբենարանի բաժինն անցնելու ժամանակ կարելի լինի սովորողներին վարժեցնել վանկ-վանկ կարգալու, գրաճանաչությունը պետք է տանել հետոյալ կերպ:

1. Ընտրել այբբենարանի մեջ համապատասխան նկար և կարդալ նրանց տակ եղած բառերը:

2. Շարժական այբբենարանից դասատուն նախօրոք կտղմում է այնպիսի բառ, որի մեջ տեղափորում է նոր անցնելիք տառը. բաժանում է այն վանկերի, որի ժամանակ անջատում և սովորողների ուշադրությունը հրավիրում է հատկապիս անցնելիք տառի վրա:

3. Անցնելիք տառ—հնչյունն ավելի խորը յուրացնել տալու համար, շարժական այբբենարանից դասատուն կազմում և կարգացնել է տալիս մի քանի բառ, օգտագործելով միաժամանակ այբբենարանում եղած համապատասխան տեքստը:

4. Դասատուն սովորողներին հմբովին կարդալ է տալիս այբբենարանի տեքստը՝ վանկերով:

5. Դասատուն սովորողներին հերթական կարգով կարդալ է տալիս այբբենարանում զետեղված տեքստը:

Նպատակահարմար է նախօրոք կարգացնել տալ նախ ավելի առաջադեմ սովորողներին, որոնք կարող են օրինակ ծառայել մյուսներին:

Գրելու վարժությունն սկսվում է ընթերցանության հետ միասին, որի համար անհրաժեշտ է գրել տալ անցած տառի էլեմենտները, նոր միայն տառը: Նախքան որեւէ տեքստի գրավոր աշխատանքին անցնելն, անհրաժեշտ է, որպեսզի դասատուն, սովորողների հետ միասին, մանրամասն կերպով վերլուծման ենթարկի տեքստը և կարգացնի այն, որից հետո դասատուն գրի է առնում այն գրատախտակի վրա այնպես, որ սովորողները կարողանան տեսնել նրա ձեռքի յուրաքանչյուր շարժումը: Դասագրքի այբբենարանի բաժինն անցնելու ժամանակ սովորողները

միայն նախապատրաստվում են ինքնուրույն կերպով գլուխոր աշխատանք կատարելու: Արտազրելու համար սովորողներին պետք է տրվի պատրաստի օրինակ, նախ ձեռագիր, ապա տպագիր տեքստ:

Արտազրության ժամանակ դասատուն սիստեմատիկ կերպով պետք է հետեւ, որպեսզի սովորողները հենց սկզբից դասից արտազրեն ոչ թե առանձին տառերով, այլ ամբողջ բառերով, տառը բառի մեջ զրեն կանոնավոր, ճիշտ կապակցեն տառերը, տառը ձեւակերպն կանոնավոր, խոշոր և դուրս չգան տեսողի տողերից: Նոր անցնելիք տառը, նախքան բառի մեջ գրի առնելը, պետք է առանձին ցույց տալ նրա ձեռագիրը վարժեցնել այդ տառը գրելու տեխնիկային և երբ սովորողները կվարժվեն այդ տառը գրելուն, այլև կարիք չկա հետաձգելու այդ տառի գրելը բառի մեջ և գրելուց հետո առանձնացնել նոր անցած տառը: Գրավոր աշխատանք տալուց առաջ սովորողներին պետք է տալ շարժական այբբենարանով կազմելու տվյալ բառը:

Թե կարդալ և թե գրել սովորեցնելու ժամանակ դասատուն ամեն կերպ պետք է խորացնի սովորողների ունակությունը: Աշխատանքն ավելի կենդանի դարձնելու նպատակով ցանկալի է, որպեսզի դասատուն ընտրի և ձեռքի տակ ունենա տեղական կյանքի վերաբերյալ և սովորողների փորձից լրացուցիչ նյութ: Որքան հետաքրքիր լինի կարդալու կամ գրելու համար տրված տեքստը, այնքան սովորողներն ավելի մեծ հետաքրքրությամբ կողարապեն:

## ՇԱՐԺԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ԱՄԵՆԱԱՆԴՐԱՋԵՆՑ ՊԻՏՈՒՅՑ Է

Գրաճանաչություն սովորեցնելու համար շարժական այբբենարանն ամենաանհրաժեշտ պիտույք է:

Սովորողները ուսման սկզբի օրերում հեշտությամբ են կարդում խոշոր շրիփաը: Շարժական տառերի օգնությամբ հեշտ է ցույց տալ սովորողներին, թե ինչպես է կազմվում բառը, ինչպես է նա բաժանվում վանկերի, նա ինչ տառերից է բաղկացած: Շարժական այբբենարանի օգտագործումը պետք է գործադրության մեջ զնել պարապմունքի սկզբից և շարունակել այնքան ժամանակ, մինչև սովորողներն ապատ կերպով կակսեն կարդալ այբբենարանի մեջ, որպես ընթերցանության նյութ տեղափոխած փոքրիկ տեքստելը:

Շարժական այբբենարանը տպագրվում է թե առանձին մեծ թերթերի վրա և թե «այբբենարան» դասագրքին կից՝ որպես հավելված: Եթե անդրադիտության վերացման դպրոցը չունի պատրաստի շարժական այբբենարան լեզվի դասատուն ինքը պետք է պատրաստի այն, սովորաթղթից կամ հասարակ թղթից: Շարժական այբբենարանից դուրսցը պետք է ունենա մի քանի կոմպլեկտ:

Որպեսզի շարժական այբբենարանից տեխնիկապես ավելի հեշտ լինի օգտվել նպատականարմար է պատրաստել հատուկ արկղ, որը յուրաքանչյուր տառի համար ունենա մի առանձին բաժանմունք: Արկղի ամեն մի բաժանմունքում պահվում են միատեսակ տառեր:

### Դ Ա Ս Ի Պ Լ Ա Ն Ը

1. Սովորողների հետ միասին պարզել գրագիտության նշանակությունը, ծանոթացնել նրանց խոսքի և նրա բաղկացուցիչ մասերի հետ:

2. Ա. հնչյուն—տառի վերլուծությունը, շարժական այբբենարանից Ա. տառի ցուցադրումը:

3. Ա. տառը գրելու տեխնիկան (նախ տարրերը, ապա ամբողջ տառը):

4. Ս հնչյուն—տառի վերլուծությունը. շարժական այբբենարանից Ս տառի ցուցադրումը:

5. Ս տառը գրելու տեխնիկան (նախ տարրերը, ապա ամբողջ տառը):

6. Ասա բառի հնչյունատառային վերլուծությունը: Շարժական այբբենարանի միջոցով ասա բառի կազմելն ու կարդումը:

7. ա, ս տառերի և ասա բառի գրելը:

### Դ Ա Ս Ի Ը Ն Թ Ա Յ Ք Ը

Նախքան այբբենարանով պարապմունք սկսելն անհրաժեշտ է սովորողների հետ զրույցի միջոցով պարզել թե սոցիալիստական շինարարություն և թե սովորողների գործնական կյանքի համար ինչ էական նշանակություն ունի գրագիտությունը: Որից հետո սովորողներին պետք է բացատրել որ լավ գրանանաչ դառնալու համար նրանք պետք է իմանան, թե ինչ է խոսքը, որ

խոսքը բաղկացած է բառերից, որ բառը գրվում և կարդացվում է տառերի օգնությամբ: Նման զրույցի միջոցով սովորողները հնասկանան, որ առաջին հերթին անհրաժեշտ է լավ ծանոթանալ խոսքի մեջ եղած առանձին բառերի հետ:

Խոսքին ծանոթացնելը տարվում է հետեւյալ կերպ՝ դաստուն սովորողներին բերում է այն եզրակացության, որ այն բոլորն, ինչ մենք ասում ենք, կոչվում է բանավոր խոսակցություն, զրույց, խոսք:

Դասատուն սովորողներին բանավոր խոսքի մասին գաղափար տալուց հետո դասագրքից կամ լրագրերից կարդում է որևէ հոգված կամ տեքստ, բացատրելով, որ դա ևս խոսք է, որը տըպագրված է լրագրում կամ դասագրքում:

Սյալիսով սովորողներին պարզ կլինի, որ խոսքը կարելի է և գրի առնել Եթե կոլտնտեսականի բանվոր եղբայրն ապրում և աշխատում է քաղաքում և եթե կոլտնտեսականը ցանկանում է իրազեկ պահել բանվոր եղբայրն իրեն վերաբերող որևէ հարցի մասին, ապա կարող է նրան նամակ գրել և սա կլինի զրավոր խոսք: Նշանակում է, որ խոսքը կարող է տպագրվել գրքերում, լուսպերում, ժուռնալներում, նամակներում, արտասանվել ժողովներում, տանը, գլորոցում և այլն:

Որպեսզի կարելի լինի համոզվել, թե՝ սովորողները տրված բացատրությունը հասկացել են, թե ոչ, դասատուն մի քանի սովորողների առաջարկում է պատմել, թե իրենք խոսք ասելով ինչ են հասկանում:

Խռոչի բաժանումը նախադասությանների: Դասատուն բացատրում է, որ մեր ամբողջ խոսքը բաղկացած է մասերից: Որպեսովով կարելի լինի ճիշտ կերպով գրի առնել և կարդալ, պետք է կարողանալ խոսքը բաժանել մասերի: Որպեսզի սովորողները կառողանան պարզ գաղափարը կազմել այն մասին, թե ինչ մասերի է բաժանվում խոսքը, դասատուն դասագրքից կարդում է մի որևէ հոգված, օրինակ.—«Կոլեկտիվում ուրախ ենք» («Այբբենարան» էջ 21):

Դասատուն այդ հոգվածն սկզբում կարդում է արագ, չպահպանելով որևէ կետադրություն:

Սյալիսով հոգվածը դառնում է անհամարական: Դասատուն նորից կարդում է այդ միևնույն հոգվածն, այս անդամ արդեն զանգալ, պարզ արտասանությամբ և ճիշտ առողանությամբ, պահպանելով կետադրության բոլոր կանոնները:

Դասատուն սովորողներին բացատրում է, որ հոդվածն այս  
անգամ հասկանալի դարձավ նրա համար, որ ինքը երկրորդ ան-  
գամ կարդալու ժամանակ խոռոշ ճշորեն բաժանեց մասերի:

Խոռոշի այդ մասերը կոչվում են նախադասություններ:

Դասատուն գրատախտակի վրա գրում և ապա արտասանում է  
մի քանի պարզ նախադասություն, օրինակ՝ Կոլտենականը վառ է  
անում: Եթեքնադասությունը կարգավոր է և այն,  
որից հետո սովորողները ևս իրենց հերթին կազմում են նման  
պարզ նախադասություններ:

Նախադասության մասին ընդհանուր գաղափար տալուց  
հետո անցնում են նախադասությունը բառերի վերածելու աշ-  
խատանքին:

Նախադասության բաժնեաւելի բառերի: Դասատուն սովո-  
րողների ուշադրությունը հրավիրում է այն հանդամանքի վրա,  
որ նախադասությունը էլ իր հերթին բաժանվում է մասերի—բա-  
սերի:

Դրա համար նա պարզ ու հասկանալի կերպով արտաստ-  
նում է որևէ նախադասություն, կանգ առնելով յուրաքանչյուր  
բառեց հետո, օրինակ՝ Մենք օգնում ենք:

Այս միենույն նախադասությունը խոշոր տառերով, բառե-  
րը սովորականից մի քիչ էլ ավելի հետավորությամբ գասատուն  
գրի է առնում գրատախտակի վրա և նորից կտրդում, այս ան-  
գամ ևս կանգ առնելով յուրաքանչյուր բառից հետո Դասատուն  
առաջարկում է սովորողներին հաշվել, թե նա քանի բառ ասաց և  
գրեց գրատախտակի վրա: Սովորողները լսողությամբ և առա-  
զությամբ որոշում են, որ գասատուն արտասանել և գրի է ա-  
ռել 3 բառ:

Սովորողներին ավելի լավ ըմբռնել տալու նպատակով գա-  
սատուն արտասանում և գրի է առնում 2—3 բառից բաղկացած  
մի քանի նախադասություններ ևս, բաժանելով նախադասու-  
թյունների մեջ եղած բառերն իրարից:

Երբ սովորողները կյուրացնեն, որ նախադասությունը բաղ-  
կացած է բառերից, դրանից հետո կարելի է առաջարկել նրանց,  
որ իրենք մտածեն որոշ բառեր, օրինակ՝ տուն, սեղան, տախ-  
տակ, դաստիք, տեսր, մատիս և այլն, ապա այդ բառերից կազ-  
մեն պարզ նախադասություններ, օրինակ՝ Մեր տունը գեղեցիկ  
է, Գրատախտակը կախված է, Տեսրը սեղանի վրա է և այլն:

Այս բոլոր վարժություններից հետո սովորողները գալիս

են այն եղբակացության, որ խոռոշ բաժանվում է նախադա-  
սությունների, իսկ նախադասությունը—բառերի:

Դասատուն սովորողներին դիտել է տալիս այրենարանի  
Շ. ըդ էջի ձախ կողմում եղած նկարը:

Սովորողները գիտում են նկարի տակ գրված սար բառը:

Դասատուն սովորողների ուշադրությունը հրավիրում է  
այն քանի վրա, որ սար կարելի է բաժանել մասերի—հըն-  
չյունատառերի: Որպեսզի նրանց համար այդ ավելի հասկանալի  
լինի, դասատուն սովորողներին առաջարկում է ուշադիր կեր-  
պով լսել, թե նա ինչպես է արտասանելու այդ բառը, որից հե-  
տո գասատուն արտասանում է նկարի տակ եղած բառը:  
սար—սար—ը—ը և հարցնում է, թե սովորողներն ինչ են լսում  
բառի վերջում, սովորողները կարողանում են որոշել, որ բառի  
վերջում լսվում է ը:

Որպեսզի ը հնչյուն տառն ավելի պարզ լսելի դառնա, սո-  
վորողներն իրենք ևս արտասանում են սար—սար—ը—ը բառը:  
Ապա գտաստուն սովորողներին ցույց է տալիս շարժական այր-  
բենարանի միջոցով նախօրոք կազմված սար բառը, ինչպես նաև  
բառանձին տառը: Դասատուն գրատախտակի վրա գրում է ը  
տառն այնպես, որ սովորողները կարողանան պարզ կերպով  
տեսնել նրա ձեռքի յուրաքանչյուր շարժումը, որից հետո սովո-  
րողները գրի են առնում այն իրենց տետրերում: Սա տառաձա-  
նաչության այն կարեռ և պատասխանատու մոմենտն է, երբ  
սովորողները պետք է կարողանան հասկանալ հնչյունի և նրան  
համապատասխանող տառի կապակցությունը:

Ը տառն ավելի խորը յուրացնել տալու նպատակով գասա-  
տուն և սովորողներն արտասանում են այնպիսի բառեր, որոնց  
մեջ ը տառը կրկնվում է, օրինակ՝ ըսպե, կար, Արամ և այլն:

Բառը պետք է արտասանել այնպիս, որ ը-ն իր հատուկ հըն-  
չյունով տարբերվի մյուս տառերից:

Ը տառ—հնչյունը յուրացնել տալու կապակցությամբ կա-  
տարված վարժությունները վերջացնելուց հետո գասատուն, շար-  
ժական ալբրենարանի միջոցով, նախօրոք կազմված սար բառը  
կախում է գրատախտակի վրա, սկսում է կարգալ այն, նախա-  
զգուշացնելով սովորողներին, որ նա այդ բառը դիտավորյալ  
կերպով գտնված է կարգալու, որպեսզի նրանք կարողանան հե-  
տեւ լսել և որոշել, թե որ տառը որ հնչյունին է վերաբերվում, և  
մկնում է կարգալ—սա—ա—ը միաժամանակ մատով ցույց է  
տալիս արտասանած յուրաքանչյուր տառը:

Նման ձևով կարդում են նաև սովորողները, որից հետո սուշ վորողները շարժական այբբենարանի միջոցով ինքնուրուցն կրպով կազմում են սար բառը: Դասագուն անպայման պետք է ստուգի սովորողների կազմած բառի ճշտությունը և ուղի նըրանց կատարած սխալը: Նախքան սխալն ուղելն անհրաժեշտ է տվյալ սովորողներին նորից արտասանել տալ սար բառը, մինչև նա կարդանա համոզվի, թե ինչումն է կայանում իր սխալը: Այս դեպքում արտասանել տալը կարեոր մոմենտ է, քանի որ բառի սխալ կազմելը մեծ մասամբ հետեւանք է ոչ ճշտ արտասանության:

Շարժական այբբենարանի միջոցով սար բառը կազմելուց և կարդալուց հետո սովորողներն անցնում են այդ բառի գրավոր աշխատանքին:

ՍԱՐ խոսքի գըավոր աշխատանքը: Ամենից առաջ սովորողներին պետք է բացատրել, թե գրավոր աշխատանք կամարելու ժամանակ ինչպես պետք է նստել ինչպես բռնել գրիչը և սեղանի վրա պահել տետրը:

Շարժական այբբենարանից կազմված սար բառը դասատուն խոշոր տառերով գրում է գրատախտակի վրա: Բառը գրատախտակի վրա գրելու ժամանակ դասատուն բացատրում է, թե որտեղ պետք է սկսել գրել յուրաքանչյուր բառը, գեղի ուր տառել կամ գրիչը: Մրանից հետո սովորողներն սկսում են բառն գրել իրենց տետրերում:

Սովորողների գրելու ժամանակ դասատուն շրջում և հետեւում է նրանց գրավոր աշխատանքին, տալիս է հարկ եղած ցուցումներ և օդուում ետ մնացողներին:

Սար խոսքը սովորողները գրում են 2—3 անգամ: Դասատուն պետք է հետեւի, որ սովորողները գրեն առանց շտապելու, խոշոր և պարզ: Վերջացնելուց հետո սովորողները մի քանի անգամ կարդում են տետրում գրված բառը:

Կարդալու վարժությունը: Դասատուն դանդաղ կարդում է այբբենարանի համապատասխան տեքստը, որի ընթացքում սովորողներն իրենց դասագրքով հետեւում են նրան: Երկրորդ անգամ սովորողները ցածր ճայնով կարդում են դասատիւ հետա: Սովորողներից մի քանիսը հերթական կարգով կարդում են այդ միանույն տեքստը:

Սովորողները ուշադրությամբ հետեւում և ուղղում են կարգացողի սխալները:

Դասի վերջին ամփոփվում է մշակված նյութը և տրվում է տնային աշխատանք: Ուղղես անային աշխատանք արվում է տվյալ գասիր կապակցությամբ դասագրքում եղած տեքստը և սար բառը 3—4 անգամ գրելը:

Նման մեթոդով անցնում են նաև մյուս տառերը:

» 8 » Էջի մօակումբ

ԴԱՐԻ ՊԼԱՆԸ

1. Անցած դասի կրկնությունը:

2. Սարեր բառի վանկային և հնչյունատառային կազմությունը: Աշխատանք շարժական այբբենարանով: Սար, սարեր, սեր, Արա բառերի կարդալը:

3. Ետառի և առեր բառի գրելը:

ԴԱՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Ամենից առաջ վերջիշում են, թե ինչ է խոսքը, ինչպես է նա բաժանվում նախադասությունների և նախադասությունն ինչպես է բաժանվում բաների:

Նախադասությունը բառերի բաժանելու շուրջն անց է կացվում փոքրիկ վարժություն, որից հետո անցնում են բառերը վանկերի վերածելու աշխատանքին:

Բառերի բաժանումը վանկերի: Դասատուն բացատրում է, որ կանոնավոր կարդալու և գրելու համար պետք է կարողանալ բառերը բաժանել վանկերի: Նա վերցնում է մի քանի բառեր և վերածում վանկերի, օրինակ՝ ՏԵՏ-ՐԱԿ մա-ՏԻՏ, ՏԱԽ-Ե-ՏԱԿ, ՍԵ-ԼԱԿ: Ազա վերցնում է միայն մի բառ, օրինակ՝ ԱԽ-ԴԱՅ և արտասանում է այն ըստ առանձին մասերի, որից հետո հարցնում է սովորողներին, թե քանի մաս կա սեղան բառի մեջ նման ձևով վերցնում է նաև մի քանի այլ բառեր:

Սովորողներին ավելի ակտիվ կերպով դասին մասնակից դարձնելու նպատակով, կարելի է կիրառել հետեւյալ ձևը՝ դասատուն վերցնում է սովորողներին ծանոթ և նախօրոք մշակած որևէ երկվանկ կամ եռավանկ բառ, ինքն արտասանում է առաջին վանկը և սովորողներին հերթական կարգով արտասանել է տալիս տվյալ բառի երկրորդ կամ վերջին վանկը: Այդիսով սովորողների համար պարզում է, որ բառը բարկացած է մասերից և

յուրաքանչյուր մասը կոչվում է վանկ: Որից հետո կրկնում են, որ խոռքը բաժանվում է նախադասությունների, նախադասությունները—բառերի, բառերը—վանկերի:

Սրանով վերջանում է նախական վարժությունները և անցնում աշխատելու այբբենարանի համապատասխան տեքստի վրա:

Շարժական այբբենարանի միջոցով դասատուն կազմում է սարեր բառը: Սարեր բառը բանավոր կերպով բաժանում են վանկերի՝ սա-րեր, արտասանելու ժամանակ անջատում և առանձնապես շեշտում են և հնչյունը: Դասատուն շարժական այբբենարանից կազմված սարեր բառից անջատում է բեր վանկը, ցույց է տալիս այն սովորողներին, արտասանում է այն մի քանի անգամ, որի ընթացքում երկարացնում է և հնչյունի արտասանությունը՝ բ-ե-ե-ե-ր, ապա անջատում է միայն և տառը և ցույց է տալիս այն առանձին, ասելով, որ դա և տառն է: Որից հետո հարցնում է առանձին սովորողների, թե ինքն ինչ տառ ցույց տվեց: Նման վարժությունների ընթացքում դասատուն պետք է կրկնի այնքան մենչև համոզվի, որ սովորողները ոչ թե մեխանիկորեն են կրկնում, այլ իրոք յուրացըել են անցած հնչյուն-տառի գաղափարը: Որից հետո դասատուն և տառը գրում է գրատախտակի վրա, իսկ սովորողներն իրենց տետրերում: Ապա անցնում են շարժական այբբենարանի միջոցով սարեր բառի կազմելուն: Նախքան բառի կազմելը, սովորողները, դասատուի օգնությամբ, արտասանում են սարեր բառը վանկերով և համոզվում, որ այսաւ բառը կազմված է 2 վանկից, որից հետո կազմում են այդ բառը շարժական այբբենարանով: Եթե դասատուն ստուգում և ուղղում է եղած սխաները, ապա անցնում են գրավոր աշխատանքի:

Սարեր բառի գրավոր աշխատանքը տարվում է այնպես, ինչպես սար բառի գրավորը: Դասատուն մանրամասն կերպով բացառում է, թե յուրաքանչյուր տառը որտեղից սկսել և տողի որ կողմը պետք է գրել նրա մասերը, բացատրության հետ միասին դասատուն անցած բառը գրում է գրատախտակի վրա, որի ընթացքում սովորողներն ուշազրությամբ հետևում են դասատուն, սովա գրի առնում իրենց տետրերում:

Դասը վերջանում է այբբենարանի տեքստի ընթերցումով: Նախ կարդում է դասատուն, ապա դասատուի հետ միասին ըուլուր սովորողները, որից հետո դասատուն կարդալ է տալիս աշակերտներից մի քանիսին անհատորեն (մեկը կարդում է, իսկ մյուսները հետևում են դասագրքով):

Ոլրպես տնային աշխատանք տրվում է տեքստի կարդալը և սարեր բառի մի քանի անգամ՝ գրելը:

Ամբողջ այբբենարանի բաժինը մշակվում և անց է կացվում նույն ձևով, ինչպես ցույց տրվեց վերև, որը կայանում է հետևյալում:

1. Անց է կացվում անցած նյութի համառոտ կրկնությունը:

2. Կատարվում է բառի հնչյունատառային և վանկային կազմության վերլուծություն:

3. Անցնելիք նոր տառը յուրացնել է տրվում շարժական այբբենի օգնությամբ:

4. Շարժական այբբենի աշխատանք տանելուց հետո անց է կացվում նոր անցած տառի բառի և նախադասության գլխավոր աշխատանքը. դասատուն գրում է գրատախտակի վրա, իսկ սովորողները տետրերում:

5. Այբբենարանի համապատասխան տեքստի ընթերցումը: Դասատուն նախ կարդում է ինքը, ապա կարդում է սովորողների հետ, որից հետո սովորողներից մի քանիսը կարդում են անհատորեն, որի ժամանակ մյուսները հետևում և ուղղում են սովորողի կատարած սխաները:

6. Անցած տառի կապակցությամբ տրված տեքստը կարդալուց հետո սովորողներին տրվում է տնային աշխատանք:

Այբբենարանի յուրաքանչյուրը էջի վերջում վարժությունների համար նյութեր են տրված: Այդ նյութերը պես է օգտագործել թե շարժական այբբենարանով աշխատանք կատարելու և թե դասարանում ու տանը կարդալու համար:

## ԼՐԱՅՈՒՑԻՉ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Նկատված երեսությ է, որ տնգրագիտության վերացման դպրոցների սովորողները տառածանաչ դառնալու շրջանում հաճախ բաղաձայն տառերի վերջում ավելացնում են և հնչյունը. որը հետագայում դժվար է լինում ուղղել ուստի անհրաժեշտ է, որ դասատուն սովորողներին տառածանաչ դարձնելու ժամանակ առանձնապես ուշազրություն դարձնի այս հանդամոնքի վրա և ամեն կերպ աշխատի կանխել այդ երեսությը:

Բաղաձայն տառերի վերջում ը հնչյուն ավելացնելը մասմբ բացատրվում է նրանով, որ այդ տառերն անջատ կերպով շատ են արտասանել տալիս, որի ընթացքում սովորողները վարժ-

վում են սխալ արտառանության: Օքինակի բ-ը, կ-ը, պ-ը և այլն:

Դրանից խուսափելու համար նոր տառը (մանավանդ բռն-ղաձայնը) սովորեցնելու ժամանակ նրա շուրջը կատարված վար-ժությունները պետք է տանել ամբողջ բառերով և ուղղել սխալ արտառանությունները:

Այսքինարանի 19—40 էջերում եղած տեքստերն աստիշնաշբար բարդանում են, որի պատճառով այդ նյութերը մշակելու ժամանակ կարդալ ու գրել սովորեցնելու մեթոդների մեջ պիտք է մտցնել մի քանի փոփոխություններ՝

1. Զրույցնեանց է կայվում ըստ տեքստի բովանդակության:

2. Ծարժական այլքինարանով աշխատանքը կատարելու ժամանակ վերցվում է ոչ թե այլող տեքստը, այլ այն բառերն ու առանձին նախադասությունները, որոնցում տեղ է գտել նոր անցնելիք հնչունատառը:

3. Նախքան տեքստի ընթերցանությանն անցնելը պետք է բացատրել դժվար հասկանալի բառերը, տալ տեքստի համառոտ բովանդակությունը և կատարել բառը վանկերի վերածելու միջանի վարժությունները:

Առաջին դեպքում անհասկանալի բառերը բացատրվում են նկարների համեմատությունների և բանավոր բացատրությունների օգնությամբ, իսկ երկրորդ դեպքում աշխատանքը տարբում է հատվող (շարժական) այլուրների օգնությամբ:

Կարդալը սովորաբար անց է կացվում հետևյալ կերպ՝ նախ դասառուն հոգվածը կամ տեքստը բարձրաձայն, դանդաղ և ուշարդ ձևով կարդում է ինքը։ Հետո հերթական կարդով կարդում են սովորողները։ Եթե սովորողը կարդալու ժամանակ որևէ բառի մեջ սխալ է կատարում, դասառուն առաջարկում է նրան ուշադիր կերպով կարդալ և ուղղել իր սխալը։ Իսկ եթե կարդացողն ինքը դժվարացնում է ուղղել իր կատարած սխալը, դասառուի ցուցումով ուղղում է կարդալ են կատարած սխալը, այլ սովորողները

4. Աղջկեղի կարելի լինի ստուգել թէ սովորողները հոգ-  
վածը կամ տեքստը հասկացել են թէ ոչ դաստիառն ինքը կար-  
դալուց և սովորողներին կարգալ տալուց հետո, կարդացածի բովան-  
դակության շուրջը սովորողներին տալիս է որոշ ստուգիչ հարցեր

5. Գրել սովորեցնելու գեպքում սովորողներին պետք է ստուգել տալ ոչ միայն այրբենարանի ձեռագիր տեքստն, այլև տպագիրը, իսկ 25 էջից հետո պետք է վարժեցնել նաև հիշողությանը գրելուն;

ՀԱՅՈՂՈՒԹՅԱՄԲ ԳՐԵԼ ՎԱՐԺԵՑՆԵԼՈՒ ԶԵՎԵՐԸ

Հիշողությամբ գրելուն պետք է անցել հոդվածը կաբդալուց և այդ հոդվածի շուրջը համապատասխան դրույց կազմակերպելուց հետո:

Դասատուն սովորողների մամնակցությամբ, կարդացած նյութի շուրջը կազմում է մի քանի նախադասություն:

Դասատուն սովորողներին բացատրում է, որ նրանք մինչև  
այժմ կատարել են արտագրություն՝ զբանախտակից կամ այբ-  
բենարանից, իսկ այժմ պկոռք է անցնել գրելու աշխատանքի մի-  
նոր ձեի:

Նման բացատրություն տարլուց հետո, գասատուն սովորողների հետ միասին կազմած նախադասությունները գրում է գրատախտակի վրա։ Այդ նախադասությունները սովորողները խըմբովին կարդում են, բառերը բաժանելով վանկերի։ Կարդալուց հետո դասատուն ջնջում է գրատախտակից նախադասությունների մեջ եղած մի քանի բառերը։ Սովորողները գրատախտակի վրա գրված նախադասությունները գրանցում են իրենց տնտերին մեջ, որի ընթացքում ջնջված բառերը գրում են հիշողությամբ

Գրավոր աշխատանքը հիշողությամբ տանելու առաջին դասը  
անց է կացվում հետևյալ կերպ՝ սկզբում դասատուն սովորողների  
հետ միասին դանդաղ արտասանում է մի որևէ նախադասու-  
թյուն, օրինակ՝ Մենք սովորում ենք դպրոցաւմ. դասատուն այս նա-  
խադասությունը բաժանում է բառերի ու վանկերի և սովորող-  
ների հետ միասին վերլուծման է ենթարկում ըստ հնչյունական  
կազմի, որից հետո այդ նախադասությունը գրում է գրատախ-  
տակի վրա: Սովորողները, դասատվի հետ միասին, նախադա-  
սության մեջ եղած բառերը կարդում են վանկերով և ուշագրու-  
թյամբ նայում, թէ ինչպիս է գրված յուրաքանչյուր բառը: Դա-  
սատուն գրատախտակի վրայից ջնջում է մենք բառը և առա-  
ջարկում է զրել ամբողջ նախադասությունը, որի ընթացքում  
սենք բառը սովորողները գրում են հիշողությամբ:

Գրավոր աշխատանքն ավարտելուց հետո դասատուն գրա-  
տախուակի վրա նորից զրում է մենք բառը, որպեսզի սովորողները  
կարողանան ստուգել իրենց զրավոր աշխատանքի ճշտությունը

Նման ձևով մշակվում են նաև այլ նախագծասություններ:  
Մի քանի վարժություններից հետո գրառաբանակից կարելի է  
ջնջել ոչ թե մեկ, այլ 2—3 բառ, իսկ հետո էլ ամբողջ նախա-  
դասությունը:



ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍ ՀԵՏԱՎԱ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
«ՀԱՂԹԱՆԱԿԻ» ՀՈՒՎԱԾԻ ՄՇԱԿՈՒՄԸ (Էջ 48)

ԴԱՍԻ ԳԼԱՆԸ

1. «Հաղթանակը» հոգվածի կարդալը:

2. Նախադասություններ՝ գրավոր աշխատանքի համար—  
«Հենինի հետ ունեցած հանդիպումն ինձ վրա մեծ տպավորու-  
թյուն թողեց: Ես սկսեցի հաճախ լինել բանվորական խմբակ-  
ներում: Այստեղ ես ծանոթացա կենինի հետ և մտա պարտիայի  
մեջ»:

3. Ուղղագրություն—մեծատառի ինքնուրույն գործածու-  
թյունը վերջակետից հետո (անցածի կրկնությունը և խորացումը):

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Ընթերցում. 1. Դասատուն սովորողներին ծանոթացնում է  
հոգվածի մեջ եղած մտքի տեսակետից անհասկանալի և դժվար  
կարդացվելիք բառերի հետ և այդ բառերը գրում է գրատախ-  
տակի վրա—դահիներ, ապստամբություն, մատեացույց:

Այսուհետև դասատուն գրատախտակի վրա գրված բառերը  
վանկերի բաժանելով, կարդում և բացատրում է նրանց նշանա-  
կությունը, հրավիրելով սովորողների ուշագրությունն այդ բա-  
ռերի ուղղագրության վրա: Դասատիքի առաջադրությամբ սովո-  
րողներն այդ բառերն գրում են իրենց տեսքերում և 2—3 ան-  
դամ կարդում:

2. Դասատուն դանդաղ, ամբողջական բառերով, յուրաքան-  
չյուր բառից հետո կանգ առնելով կարդում է ամբողջ հոգվածը,  
իսկ սովորողները հետեւում են դասատիքն: Կարդալու ժամանակ  
դասատուն պետք է հետեւի, որ սովորողներից որևէ մեկը ետ  
չմնա նրանցից, նաև պետք է կարդա այնպես, որպեսզի սովորող-  
ներն իրենց մտքում կարդալով կարողանան հասնել նրան:

3. Դրանից հետո դասատուն այդ միևնույն հոգվածը հեր-  
թական կարգով ատիկս է կարդալու առանձին սովորողների, իսկ  
մյուսները հետեւում և դասատիքի առաջադրությամբ ուղղում են  
կարդացողի թույլ տված սիմալը: Յուրաքանչյուր սովորողի պետք  
է տալ կարդալու 3—5 անոր:

4. Այս աշխատանքն ավարտիլուց հետո սովորողները, դա-  
սատիքի օգնությամբ, քննության են առնում կարդացած հոգ-

վածն ըստ բովանդակության, հանում համապատասխան եղած-  
կացություն և գրավոր աշխատանքի համար կազմում են 2—3  
նախադասություն:

Գրավոր աշխատանք և ուղղագրություն. 1. Դասատուն սովո-  
րողներին առաջարկում է ուշագրությամբ նայել հոգվածին և  
առուղել՝ արդյոք բոլոր տեղերում վերջակետից հետո եղած բա-  
ռերը մեծատառով են գրված թէ ոչ:

Սովորողներն ուշագրությամբ նայում են: Ամբողջ դասա-  
րանը հանգում է այն եղակացության, որ վերջակետից հետո  
միշտ էլ գրվում է մեծատառ:

2. Դասատուն, սովորողների հետ միասին, գրավոր աշխա-  
տանքի համար կազմած նախադասությունները բաժանում է բա-  
ռերի և գանձերի: Գրավորի համար մշակված նախադասություն-  
ները գրի առնելուց առաջ դասատուն մեկ անգամ ևս զգուշաց-  
նում է սովորողներին, որ գրավորի սկզբում և վերջակետից հետո  
միշտ էլ գրում են մեծատառ:

3. Մեծատառի գործածությունը լավ յուրացնել տալու նը-  
պատակով, գասառուն սովորողներին կատարել է տալիս մի շարք  
վարժություններ: Դրա համար գրատախտակի վրա գրում է ոի  
քանի նախադասություններ, որի ընթացքում վերջակետից հետո  
եկող բարի սկզբնատառի փոխարեն զիծ է դնում: Սովորողները  
գրված նախադասությունները կարդում են դասատիքի հետ միա-  
սին, որի ընթացքում դասաւուն բացատրում է, թե ինչու վեր-  
ջակետից հետ բոլոր գեղագրուած բառը գրվում է մեծատառով, նա  
առաջարկում է սովորողներին գրեա առնել գրատախտակի վրա  
գրված նախադասությունները տեսքերում և ինքնուրույն կեր-  
պով լրացնել բաց թողնված սկզբնական տառերը:

4. Վերը հիշված վարժությունները կատարելուց հետո դա-  
սատուն ընտրում է 2—3 համառոտ (2—3 բառից բաղկացած)  
նախադասություն, նախօրոք վերլուծում է այն և առաջարկում  
սովորողներին գրել այդ նախադասությունները թելազության  
միջոցով: Գրավոր աշխատանքի ժամանակ դասատուն օգնում է  
ետ մնացող սովորողներին և իր հիմնական ուշագրությունը դարձ-  
նում է նրանց վրա, որպեսզի սովորողները չախալվն՝ մեծատառերը  
տեղին գործադրելիս:

Դասագրքի «Ընթերցարան» մասում զիտեղված հոգվածները  
մշակվում են վերը հիշված ձևով: Որպես լրացուցիչ նյութեր

հովորողներին պետք է տալ կարգալու նաև լրադրեր և հանրաշատչելի քաղաքական և գեղարվեստական բրոցյուրները

Գրավոր աշխատանքի ժամանակ պետք է անցնել ծրագրով սահմանված ուղղագրական կանոնները:

### ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԴԸ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԴՐՈՇՆԵՐՈՒՄ

Պարտիայի և կառավարության որոշման համաձայն անգրադիտության ու կիսազրագիտության վերացման դպրոցներն անհամար կերպով պետք է գործնն ամբողջ տարին:

Սովորողները, ծրագրային նյութն անցնելուց և սահմանվոծ դասընթացն ավարտելուց հետո, ենթարկվում են ստուգման, սահմանում համապատասխան տեղեկանք ու ավարտողները վոխագըրվում են կիսազրագիտության վերացման դպրոցները:

Թույլ առաջադիմություն ունենալու հետեւանքով միևնույն դասարանում մասցող, ինչպես նաև ուսուցումից գուրք մասց անգրագետների ու կիսազրագետների համար կազմակերպվում են անգրագիտության ու կիսազրագիտության վերացման նոր դպրոցներ կամ խմբակներ:

Ժողկրթության բաժինները պետք է սահմանեն խիստ հըսկողություն, որպեսզի ծրագրով նախատեսնաշած նյութերը լրիվ չափով ավարտած, ուսումնական պլանով ահմանված 330 ժամ պարագաներով անցկացրած բոլոր դասաւուններում և խմբակներում անպայման անցկացվեն ստուգումներ և ոչ մի գեղքում թույլ չտար, որպեսզի անգրագիտության ու կիսազրագիտության վերացման դպրոցներն ու խմբակներն առանց ստուգման ենթարկելու, տարերայնորեն փակվեն:

Ստուգումները դպրոցներում տարվելու են հետեւյալ ձեռով:

### ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՄԵԼԸ

Ստուգման աշխատանքներին անցնելուց առաջ անհրաժեշտ է սովորողների հետ ունենալ համառոտ զրույց, որի ընթացքում դասատուն պարզաբանում է ստուգման նպատակը նրանց ծանոթացնում է ստուգման հրահանդին և ցույց է տալիս, թե ստուգումն ինչ չափով կարող է օգնել հետազա ուսուցմանը:

Այսպիսի զրույցը կապահովի սովորողների լուրջ մոտեցումը գեպի ստուգման գործը և կվերացնի այն լարված զրությունը, որը հաֆախ տեղի է ունենում ոչ ճիշտ կազմակերպված ստուգման ժամանակ:

Սովորողն ինքը լուրջ պետք է նախապատրաստվի ստուգմանը նա պետք է կարողանա գիտակցել, թե ինքը հատկապես ինչի վրա պետք է ուղադրություն գարձնի:

Անգրագիտության վերացման դպրոցներում սովորողներին պետք է ստուգել մայրենի լեզվից (կարդալ, գրել) թվաբանությունից, իսկ կիսազրագիտության վերացման դպրոցներում նաև աշխարհագրությունից:

ԿԱՐԴԱԼՈՒ ՍՏՈՒԳՈՒՄՆ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՐԴԱԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սովորողների կարգալու ունակությունն ստուգելու համար որպես նյութ կարելի է վերցնել տեղական թերթերը, կիսազրագետների համար հրատարակված հանրամատչելի գեղարվեստական բրոցյուրները և այլն, պայմանով, որ այդ նյութերը նախօրոք կարգացված չլինեն սովորողների կողմէց:

Վերցրված տեքստի շրիփտը սովորականից մանը չպետք է լինի: Բնօվանդակությունը պետք է լինի չափաղանց պարզ (տեքստում չպետք է լինեն սովորողներին անծանոթ բառեր և հասկացողություններ):

Նյութերի ընտրությունը կատարում է դասատուն:

### ԿԱՐԴԱԼՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԴԸ

Կարգալու ստուգումն անց է կացվում անհատորեն: Սովորողներից յուրաքանչյուրին դասատուն տալիս է առաջուց նախատեսված մի որևէ պատմություն՝ ամբողջովին կամ մրամասը (10—15 տող): Սովորողը տրված տեքստը լուր կարգալուց և բովանդակությանը ծանոթանալուց հետո, դասատուն առաջարկում է նրան բարձրածայն կարգալ մի քանի նախադասություն, որից հետո ամբողջ տեքստի վերաբերյալ տալիս է երկու-երեք ստուգիչ հարցեր, կամ եթե տեքստը հարմար է պատմելու համար, առաջարկում է սովորողին պատմել այն համառոտ կերպով:

Ստուգման ժամանակ լրիվ կոնտինգենտ ունեցող դասարանների սովորողներին կարելի է բաժանել ավելի փոքր խմբերի (3—5 հոգի): Այս գեղքում ընտրված նյութը խմբին տրվում է միաժամանակ (յուրաքանչյուրին առանձին նյութ):

Բարձրածայն կարգալու և տրված հարցերին պատասխանելու համար սովորողները զուրս են կանչվում դասատվի կողմէց միայն այն ժամանակ, երբ տրված տեքստը մտքում կարգացված կլինեն:

Դասատուն ստուգման ժամանակ նշում է յուրաքանչյուր սովորողի թույլ տված թերությունները (ոչ կանոնավոր կարդալը, վատ հասկանալը և այլն):

Կարդալու ունակությունը գնահատելու համար հիմնականը պետք է լինի այն, թե տվյալ սովորողը տարվա ընթացքում ինչպիսի առաջադիմություն է ցույց տվել կարդալու տեխնիկան յուրացնելու և կարդացածը հասկանալու ուղղությամբ:

### ԿԱՐԴԱԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

1. «Գերազանց» տրվում է այն դեպքում, երբ սովորողը ձեռք է բերել տրված տեքստն անսխալ կարդալու տեխնիկան և հասկանում է կարդացածը (կարդացել է ամբողջ բառերով, չի աղավաղել այն, պահպանել է կետադրության նշանները):

2. «Հավաք» տրվում է, երբ սովորողն անհան սիրալներով է կարդացել տեքստը և հասկացել է կարդացածը (միայն դժվար բառերն է կարդացել վանկերով):

3. «Միջակ» տրվում է, երբ կարդալու ժամանակ սովորողը բառերը վեր է ածել վանկերի կամ վանկերը տառերի, սակայն կարդացել է հասկանալ կարդացածը:

4. Սովորողը չի փոխադրվում, եթե նա իր կարդալու վատ տեխնիկայի հետևանքով չի կարողանում հասկանալ կարդացածը:

### ԳՐԱՎՈՐԻ ՄՏՈՒԳՈՒՄԸ

Գրավորի ունակությունն ստուգելու համար անց է կացվում ինքնուրույն գրավոր աշխատանքը և տրվում է թելադրություն:

Ինքնուրույն գրավոր աշխատանքը տրվում է հետեւյալ ձեռով. դասատուն տալիս է որոշ հարցեր, որին սովորողը տալիս է գրավոր պատասխան: Պետք է ստուգել թե արդյոք սովորողը կարող է գրավոր պատասխանել պարզ ձեռագրով տրված մատչելի հարցերին: Պետք է տրվեն այնպիսի հարցեր, որոնց կարելի լինի պատասխանել մի ամբողջ պարզ նախադասությամբ: Օրինակ.

Հարց.—Քանի՞ աշխօր ունես դու.

Պատ.—Ես ունեմ 400 աշխօր:

Թելադրության նյութը բաղկացած պետք է լինի ոչ ավել քան 15—25 բառից: Թելադրվելիք բառերն իրենց բովանդակությամբ և կառուցվածքով պետք է հասկանալի լինեն կիսագրագետներին (անհրաժեշտ է խուսափել դժվար բառերից):

Տեքստը բաղկացած պետք է լինի ուղղագրական կանոններով կազմված բառերից, ցանկալի է, որպեսզի ամբողջ տեքստը կապակցված լինի:

### ՈՐԻՆԱԿԵԼԻ ՏԵԲՈՅ

Դպրոցը դուքս է գրել լրագրեր: Մենք կարդում ենք ընկեր ՍՍԱԼԻՆԻ և ընկեր ՄՈԼՈՇՈՎԻ ճառերը: Պատի լրագրին հոդված տվինք: Մենք սիրում ենք մեր հայրենիքը:

Թելադրության նյութը մշակում է դասատուն:

Այն դասարանների համար, որտեղ պարագողները մանկավարժներ չեն (կուլտանակայիններ և այլն), թելադրության նյութի մշակումը ժողկը թույլ բաժինը հանձնարարում է մշակելու փորձված ուսուցչի: Պետք է այնպես անել, որ թելադրվելիք նյութը մինչև ստուգությունը հայանի չլինի սովորողներին և չմշակվի նրանց կողմից:

### ԳՐԱՎՈՐԻ ՄՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԻ

Դասատուն սովորողներին բաժանում է մեկական թերթ թուղթ: Սովորողները թերթի վրա գրում են իրենց անունը և ազգանունը, որից հետո սկսվում է թելադրությունը: Դասատուն սկզբում կարդում է թելադրության համար ընտրած ամբողջ տեքստը, ապա սկսում է թելադրել առանձին մասերով, չշեղվելով ընդունված գրական արտասանությունից: Թելադրության վերջում դասատուն մի անգամ ևս կարդում է ամբողջ տեքստն այնպես, որ սովորողները հնարավորություն ունենան ստուգելու իրենց գրածը և ուղղելու կատարած սխալները:

Թելադրությունից հետո դասատուն գրատախտակի վրա գրում է մեկ-երկու հարց, որին սովորողները տալիս են գրավոր լրիվ պատասխան: Պատասխանը գրելուց առաջ սովորողները պետք է տան նրա բանավոր պատասխանը: Պատասխանները սովորողները բանավոր տալիս են առանձին-առանձին՝ հերթական կարգով, իսկ գրավոր պատասխանները՝ միաժամանակ:

Ստուգման համար տրված ինքնուրույն գրավոր աշխատանքները և թելադրությունը գնահատելու ժամանակ պետք է հաշվի առնել նաև այն, թե այս կամ այն սովորողը տարվա ընթացքում գրավորից ինչպիսի առաջադիմություն է ցույց տվել:

## ՊՐՎՈՐ ԱՇԽԱՏԱՆԴԻ ԳՆԱՀԱՏԱԿԵՆԸ

1. «Գերազանց» տրվում է, երբ սովորողը տրված ինքնույնույն գրավոր աշխատանքը գրել է պարզ և թեադրությունն անսխալ:

2. «Լավ» տրվում է, երբ սովորողը գրավոր ինքնուրույն աշխատանքը գրել է պարզ, ճիշտ ձեռակերպած տառերով, թեադրությունն առանց տառեր. բաց թողնելու և առանց բառերն աղաղաղելու, կատարելով ուղղագրական 1—2 սխալ:

3. «Միջակ» տրվում է, երբ սովորողը կարողացել է կատարել գրավոր ինքնուրույն աշխատանքը, թեադրության մեջ թույլ է տվել 3—4 սխալ, բառերի մեջ պատահաբար բաց է թողել տառեր. կատարել է ուղղագրական այնպիսի սխալներ, որոնք չեն խեղաթյուրում արված տեքստի միտքը:

4. Սովորողը չի փոխադրվում, եթե նա չի կարողանում կատարել գրավոր ինքնուրույն աշխատանք, բառերի մեջ մասսայաբար տառեր է բաց թույնում, բառերը ինեղաթյուրում է այն աստիճան, որ գրածի միտքը չի հասկացվում:

## ԹՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳՈՒՄԸ

ՆՅՈՒԹԵՐ, ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Թվաբանությունից ձեռք բերած գիտելիքներն ստուգելու ժամանակ գլխավորապես ուշադրություն պետք է դարձնել այն հարցերի վրա, որոնք ունեն գործնական նշանակություն՝ մետրական չափերն իմանալը, պարզ վիճակագրական բնույթ ունեցող հաշվառում կատարելը, ծրագրի սահմաններում թվաբանության չորս գործողությունների շուրջը վարժություններ կատարելը և այլն:

Ստուգման ժամանակ պետք է տալ մեկ—երկու հարցանի ինդիքներ (անհրաժեշտ է ընտրել այնպիսի խնդիրներ, որոնց մեջ անպայման լինեն բազմապատկման և բաժանման գործողություններ):

Նյութը պետք է մշակվի դասատվի կողմից:

Ոչ մանկավարժ դասատու ունեցող դասարանների նյութերի մշակումը ժողկրթության բաժինը հանձնում է փորձված դասատվի:

Ստուգման համար նախատեսված նյութը մինչեւ ստուգումը հայտնի չպետք է լինի սովորողներին:

Թվաբանություն ստուգումը տարվում է թե գրավոր և թե բառավոր ձևով:

## ԹՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԵՆԸ

1. «Գերազանց» տրվում է, երբ սովորողը անսխալ լուծել է տրված ինդիքներն ու օրինակները:

2. «Լավ» տրվում է, երբ սովորողը լուծել է խնդիրները և օրինակները, բայց գործողությունները կատարելու ժամանակ թույլ է տվել որոշ սխալներ, սակայն բանավորի ստուգման ժամանակ կարողացել է ուղղել այդ սխալները:

3. «Միջակ» տրվում է, երբ սովորողը չի կարողացել լուծել երկու հարցանի խնդիր կամ գրավոր վարժություններ կատարելու ժամանակ թույլ է տվել որոշ սխալներ, սակայն բանավորի ստուգման ժամանակ կարողացել է ուղղել այդ սխալները:

4. Սովորողը չի փոխադրվում, եթե նա ծրագրի սահմաններում չի յուրացը նախատեսված նյութը և չի կարողացել կատարել չորս գործողությունների սահմանում վարժություններ:

«Գերազանց», «Լավ» և «միջակ» գնահատականները հիմք են ծառայում անգրագիտության վերացման գործոցներում սովորողներին տալու փոխադրման տեղեկանքներ:

## ԴՊՐՈՅՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՄՐԱՅՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Ստուգումների վերջում յուրաքանչյուր սովորողի, ըստ նորաձեռք բերած գիտելիքների, պետք է տալ բնութագրում՝ ամբողջ բառերով է կարդում, թե վանկերով, արագ է կարդում, թե գանդադաղ, հեղեղով է կարդում, թե սահուն, կարողանման է պահանջվող ասոցանությամբ կարդալ, պահանջանելով կետադրություններն ու շեշտագրությունները: Կարողանում է ինքնուրույն գրավոր աշխատանք կատարել թե ոչ, կարողացնել է յուրացնել թվաբանական չորս գործողությունները, կարողանում է խնդիրներ լուծել:

Կաղմած բնութագրերի հիման վրա դասատուն սովորողներն են, ըստ նրանց առաջադիմության, բաժանում է որոշ խմբերի, պարզում է վատ առաջադիմություն ցույց տալու պատճառները և կազմում հաշվետվություն:

Անգրագիտության վերացման գործոցներում սովորողներից դրական գնահատական ստացողները փոխադրվում են կիսազրագիտության վերացման գործոցները:

Անգրագրար գնահատական ստացող անգրագետների համար կագմակերպվում են առանձին խմբեր, ուր սովորողները շարունակում են իրենց ուսումը, մինչև անգրագիտության վերացման

դպրոցների համար մշակված ծրագրային նյութերի լիովին յուշ-  
րացնելը:

Կազմված բնութագրերը տրվում են սովորողներին, որոնք  
այդ բնութագրերը հանձնում են այն դպրոցի դասատվին, որտեղ  
նրանք շարունակելու հն իրենց ուսումը:

Այս հանդամանքը կօգնի դասատվին ճիշտ կերպով խմբա-  
վորելու նոր ընդունվողներին և կանոնավորելու նրանց ուսման  
գործը, մանավանդ ետ մնացողների:

Ստուգումն ավարտելուց հետո սովորողների հնտ պետք է  
ունենալ զրույց, որի ընթացքում դասատուն ցույց է տալիս, թե  
նրանք հետադայում ինչպես պետք է պարապեն, առանձնապես  
ինչի՞ վրա պետք է ուշադրություն դարձնեն, որպեսզի իրենց  
ստացած գիտելիքները ոչ թե մոռանան, այլ աստիճանաբար ա-  
վելի և ամրացնեն:

Անհրաժեշտ է հանձնարարել սովորողներին, ամեն օր սիս-  
տեմատիկ կերպով կարդալ շրջանային թերթեր, քաղաքական-  
գեղարվեստական հանրամատչելի բրոշյուրներ, կատարել ինք-  
նուրույն զբավոր աշխատանք, թվաբանական վարժություններ,  
որով նրանք հնարավորություն կունենան ավելի ևս խորացնել  
իրենց ստացած գիտելիքները:



667

54 748

ԳԻՒԸ 1 Ր.

437

Как надо обучать неграмотных  
по букварю

ПРОСИЗДАТ

Ереван, типография Просиздата, Терян 127